ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԲՄԾՁԲ-22/12»

ք. Երևան

«7» փետրվարի 2022թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության աշխատանքների և ծառայությունների գնումների բաժնի պետ, գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Մուրադյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՏԵԽՆՈՒՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ**-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի համակարգչային սարքերի և սարքավորումների ընթացիկ վերանորոգման և սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **մինչև 1340000 (մեկ միլիոն երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ**, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **10 (տաս) տոկոսի չափով**: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության **0,19 (զրո ամբողջ տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով**:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի **N 1, N 2, N 3 և N 3.1** հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում է **Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը**:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	Հասցե՝ ք. Երևան, Եղբայրության 1-ին նրբ. 14
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900032542012	ՀՀ՝ 1510052737280100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ՝ 02290157
Գ. Մուրադյան ----------	Ա. Հովհաննիսյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«7» փետրվարի 2022թ. կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-22/12 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Համակարգչային սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
						հասցեն	ժամկետը
1	50311120/529	Համակարգչի և մոնիտորի վերանորոգում և սպասարկում	դրամ	Մինչև 585000	1	ք. Երևան Դ. Անհաղթի 11	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում պայմանագրի օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2022թ. ներառյալ:
2	50311250/523	Լազերային և թանաքաշիթային տպիչների վերանորոգում և սպասարկում: Պատճենահանող սարքի և տպիչների վերանորոգում և սպասարկում (քարտրիջների լիցքավորում)	դրամ	Մինչև 755000	1	ք. Երևան Դ. Անհաղթի 11	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում պայմանագրի օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2022թ. ներառյալ:

* Կատարողը պետք է Պատվիրատուի պահանջի դեպքում նույն օրվա ընթացքում ներկայանա Պատվիրատուին՝ համապատասխան ցուցումներ ստանալու համար:

* Կատարողը պետք է ծառայությունները մատուցի Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրը:

* Տեղափոխման ենթակա ապրանքները պետք է տեղափոխվեն Կատարողի ուժերով և միջոցներով:

* Կատարողը պետք է ապահովի մասնագետի ամենօրյա այցելություն:

* Մասնակիցը պարտավորվում է մատուցել վերը նշված ծառայությունները ողջ տարվա ընթացքում /մինչև 25.12.2022թ. ներառյալ/՝ մեր կողմից ներկայացված ցանկացած պահանջի և քանակի դեպքում:

* Սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերը և նյութերը տրամադրում է ծառայություն մատուցող կազմակերպությունը, որի արժեքը պետք է ներառվի ծառայության մատուցման միավոր գնի մեջ: Ընդ որում սպասարկման և վերանորոգման ենթակա սարքավորումների տեղափոխումն ու վերադարձը իրականացնում է ծառայություն մատուցող կազմակերպությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձարան
Հ/Հ 900032542012
ՀՎՀՀ 02593108

Գ. Մուրադյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՏԵԽՆՈՒՆԻԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Եղբայրության 1-ին նրբ. 14
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ՝ 1510052737280100
ՀՎՀՀ՝ 02290157

Ա. Հովհաննիսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« » փետրվարի 2022 թ. կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-22/12 ծածկագրով պայմանագրի

Գնացուցակ

Չափաբաժին 1* Համակարգչի և մոնիտորի վերանորոգում և սպասարկում	Ծառայության միավորի գինը
Համակարգչի	
LGA 775/ 1150/ 1151/ 1155/ Մայրական տպասալի նորոգում, ներառյալ բոլոր անհրաժեշտ պահեստամասերը	1000
LGA 775/ 1150/ 1151/ 1155/ Մայրական տպասալի փոխարինում, ներառյալ մայրական տպասալը	30000
Օպերատիվ հիշողություն RAM DDR2 2GB 667/800-ի փոխարինում ներառյալ RAM-ը	2000
Օպերատիվ հիշողություն RAM DDR3 4GB 1333-ի փոխարինում ներառյալ RAM-ը	6000
Օպերատիվ հիշողություն RAM DDR4 4GB –ի փոխարինում ներառյալ RAM-ը	8000
SSD SATA3 120GB-ի փոխարինում ներառյալ SDD-ն	15000
SSD SATA3 240GB-ի փոխարինում ներառյալ SDD-ն	28000
SSD SATA3 480GB-ի փոխարինում ներառյալ SDD-ն	36000
Սնուցման բլոկի 600Watt-ի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	15000
Համակարգչային պահարանի փոխարինում ներառյալ պահարանը	1000
Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը	1000
Մոնիտորի	
Սնուցման բլոկի վերանորոգում	8000
Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	8000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 17" մատրիցան	15000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 19" մատրիցան	16000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 19,6" մատրիցան	17000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 20" մատրիցան	18000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 21.5" մատրիցան	19000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 22" մատրիցան	20000
LED մատրիցայի վերանորոգում ներառյալ 27" մատրիցան	21000
Անխափան սնուցման սարքի	
Մարտկոցի 12V/7A փոխարինում ներառյալ մարտկոցը	11000
Մարտկոցի 12V/9A փոխարինում ներառյալ մարտկոցը	12000
Մարտկոցի 12V/17A փոխարինում ներառյալ մարտկոցը	20000
Ղեկավարող սալիկի վերանորոգում	5000
Վերաչափաբերում	2000
Դյուրակիր համակարգչի	
Մայրական տպասալի նորոգում	10000
Սնուցման բլոկի վերանորոգում	5000
Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ բլոկը	8000
Օպերատիվ հիշողություն RAM DDR3 4GB -ի փոխարինում ներառյալ RAM-ը	8000
Կոշտ սկավառակ HDD 320GB 2.5 Inch, 7200 RPM SATA II-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը	10000
Կոշտ սկավառակ HDD 500GB 2.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը	18000
Կոշտ սկավառակ HDD 1TB 2.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը	23000
Ընդամենը	**432000**
Ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գին	**280800**

Չափաբաժին 2* Լազերային և թանաքաշիթային տպիչների վերանորոգում և սպասարկում: Պատճենահանող սարքի և տպիչների վերանորոգում և սպասարկում: (քարտրիջների լիցքավորում)	Ծառայության միավորի գինը
Քարթրիջների լիցավորում և վերանորոգում	
CE278A/Canon 728 քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	3000
CE278A/Canon 728 քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	2000
CE278A/Canon 728 քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	2000
CE278A/Canon 728 քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	1500
CE278A/Canon 728 քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	1500
CE278A/Canon 728 քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	1500
CE285A/Canon 725 քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	3000
CE285A/Canon 725 քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	2000
CE285A/Canon 725 քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	2000
CE285A/Canon 725 քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	1500
CE285A/Canon 725 քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	1500
CE285A/Canon 725 քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	1500
CE283A/Canon 737 քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	3000
CE283A/Canon 737 քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	2000
CE283A/Canon 737 քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	2000
CE283A/Canon 737 քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	1500
CE283A/Canon 737 քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	1500
CE283A/Canon 737 քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	1500
HP 12A/FX-10/Canon703 քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	3000
HP 12A/FX-10/Canon703 քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	2000
HP 12A/FX-10/Canon703 քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	2000
HP 12A/FX-10/Canon703 քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	1500
HP 12A/FX-10/Canon703 քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	1500
HP 12A/FX-10/Canon703 քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	1500
CE505A/Canon 719 քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	3000
CE505A/Canon 719 քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	2000
CE505A/Canon 719 քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	2000
CE505A/Canon 719 քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	1500
CE505A/Canon 719 քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	1500
CE505A/Canon 719 քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	1500
Samsung SCX3200 քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	5000
Samsung SCX3200 քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	4000
Samsung SCX3200 քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	4000
Samsung SCX3200 քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	3000
Samsung SCX3200 քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	3000
Samsung SCX3200 քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	3000
Samsung SCX4300 քարթրիջի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	5000
Samsung SCX4300 քարթրիջի թմբուկի փոխարինում, ներառյալ թմբուկը	4000
Samsung SCX4300 քարթրիջի մագնիսական լիսեռի փոխարինում, ներառյալ մագնիսական լիսեռը	4000
Samsung SCX4300 քարթրիջի չափիչ դանակի փոխարինում, ներառյալ չափիչ դանակը	3000
Samsung SCX4300 քարթրիջի մաքրող դանակի փոխարինում, ներառյալ մաքրող դանակը	3000
Samsung SCX4300 քարթրիջի կարատրոնի փոխարինում, ներառյալ կարատրոնը	3000
Epson L805 տպիչի քարթրիջի 1 գույնի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	6000

Epson L1300 տպիչի քարթրիջի 1 գույնի լիցքավորում, ներառյալ համապատասխան տոները	6000

Տպիչների	
Վերանորոգում	8000
Պրոֆիլակտիկա	6000
Սկաների փոխարինում ներառյալ սկաները	2000
Xerox-ի վերածրագրավորում	1000
Samsung-ի վերածրագրավորում	1000
HP-ի վերածրագրավորում	1000
Canon-ի վերածրագրավորում	1000
Lexmark-ի վերածրագրավորում	1000
EPSON L805-ի վերանորոգում ներառյալ պահեստամասերը	10000
EPSON L805-ի մայրական սալիկի փոխարինում ներառյալ մայրական սալիկը	10000
EPSON L805-ի տպող գլխիկի փոխարինում ներառյալ տպող գլխիկը	10000
EPSON L1300-ի վերանորոգում ներառյալ պահեստամասերը	10000
EPSON L1300-ի մայրական սալիկի փոխարինում ներառյալ մայրական սալիկը	10000
EPSON L1300-ի տպող գլխիկի փոխարինում ներառյալ տպող գլխիկը	10000
Վառարանի թերմոժապավենի փոխարինում HP LJ 1005, HP LJ 1010, HP LJ 1018, HP LJ 1102, HP LJ 2035, HP LJ 2055, Canon LBP 2900, Canon MF 4410, Canon MF 3010, Canon MF 211, Samsung SCX4300, Samsung SCX3200, Lexmark E250d կամ համարժեքը (ներառյալ թերմոժապավենը)	6000
Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում HP LJ 1005, HP LJ 1010, HP LJ 1018, HP LJ 1102, HP LJ 2035, HP LJ 2055, Canon LBP 2900, Canon MF 4410, Canon MF 3010, Canon MF 211, Samsung SCX4300, Samsung SCX3200, Lexmark E250d կամ համարժեքը (ներառյալ ռետինե լիսեռը)	10000
Վառարանի ջերմատաքացուցիչի փոխարինում HP LJ 1005, HP LJ 1010, HP LJ 1018, HP LJ 1102, HP LJ 2035, HP LJ 2055, Canon LBP 2900, Canon MF 4410, Canon MF 3010, Canon MF 211, Samsung SCX4300, Samsung SCX3200, Lexmark E250d կամ համարժեքը (ներառյալ ռետինե լիսեռը)	7000
Ատամնանիվի փոխարինում HP LJ 1005, HP LJ 1010, HP LJ 1018, HP LJ 1102, HP LJ 2035, HP LJ 2055, Canon LBP 2900, Canon MF 4410, Canon MF 3010, Canon MF 211, Samsung SCX4300, Samsung SCX3200, Lexmark E250d կամ համարժեքը (ներառյալ ատամնանիվը)	5000
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում (ներառյալ ռետինե լիսեռը)	5000
Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ սնուցման բլոկը	1000
Սնուցման բլոկի վերանորոգում ներառյալ պահեստամասերը	1000
Պատճենահանող սարք	
Պատճենահանող սարքի պրոֆիլակտիկա	8000
Պատճենահանող սարքի վերանորոգում	12000
Թերմոթաղանթի փոխարինում Canon 1215/6317/7161/1600/iR2318/iR2016, կամ համարժեքը (ներառյալ թերմոթաղանթը)	10000
Վառարանի ռետինե լիսեռի փոխարինում Canon 1215/6317/7161/1600/iR2318/iR2016, կամ համարժեքը (ներառյալ ռետինե լիսեռը)	1000
Canon 1215/6317/7161/1600/iR2318/iR2016, պատճենահանող սարքի սկաների փոխարինում ներառյալ սկաները	1000
Ընդամենը	**261500**
Ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գին	**104600**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032542012
ՀՎՀՀ 02593108

Գ. Մուրադյան ---------- Կ.Տ.
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Եղբայրության 1-ին նրբ. 14
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ՝ 1510052737280100
ՀՎՀՀ՝ 02290157

Ա. Հովհաննիսյան ---------- Կ.Տ.
(ստորագրություն)

Հավելված N 2
« 7 » փետրվարի 2022թ. կնքված
ԵՔ-ԲՄԾՁԲ-22/12 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը /ՀՀ դրամ/
50311120/529	Համակարգչի և մոնիտորի վերանորոգում և սպասարկում	146 300	146 300	146 300	292 500	292 500	292 500	438 700	438 700	438 700	585 000	585 000	585 000	**585 000**
50311250/523	Լազերային և թանաքաշիթային տպիչների վերանորոգում և սպասարկում: Պատճենահանող սարքի և տպիչների վերանորոգում և սպասարկում (քարտրիջների լիցքավորում)	188 700	188 700	188 700	377 500	377 500	377 500	566 300	566 300	566 300	755 000	755 000	755 000	**755 000**
	Ընդամենը	335 000	335 000	335 000	670 000	670 000	670 000	1 005 000	1 005 000	1 005 000	1 340 000	1 340 000	1 340 000	**1 340 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀ 900032542012
ՀՎՀՀ 02593108

Գ. Մուրադյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Եղբայրության 1-ին նրբ. 14
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ՝ 1510052737280100
ՀՎՀՀ՝ 02290157

Ա. Հովհաննիսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4.2
ԵՔ-ԲՄԾՁԲ-22/12 **ծածկագրով**
գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Երևան

«02» փետրվարի 2022թ.

«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Անժելիկա Հովհաննիսյանի /Նույնականացման քարտ 000634881, տրվ.003, 14.05.2013թ./, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ԵՔ-ԲՄԾՁԲ-22/12 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:**

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ
ք.Երևան, Եղբայրության 1-ին նրբ. 14
«Արարատբանկ» ԲԲԸ
h/h 1510052737280100
ՀՎՀՀ 02290157
Տնօրեն Անժելիկա Հովհաննիսյան

(ստորագրություն)

02/02/2022թ.

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ **«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **«Արարատբանկ» ԲԲԸ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **1510052737280100**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **02290157**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **Երևանի քաղաքապետարան**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02593108**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Կենտրոնական գանձապետարան**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900015211429**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **201 000 (Երկու հարյուր մեկ հազար)**

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ (որակավորման ապահովման համար)

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը **ԵՔ-ԲՄԾՁԲ-22/12** ***(որակավորման կատարման ապահովում)***

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

Հավելված 5.1
ԵՔ-ԲՄԾՁԲ-22/12 **ծածկագրով**
գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան

«02» փետրվարի 2022թ.

«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Անժելիկա Հովհաննիսյանի /Նույնականացման քարտ 000634881, տրվ.003, 14.05.2013թ./, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ԵՔ-ԲՄԾՁԲ-22/12 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.3 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.4 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.5 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.6 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ
ք.Երևան, Եղբայրության 1-ին նրբ. 14
«Արարատբանկ» ԲԲԸ
h/h 1510052737280100
ՀՎՀՀ 02290157
Տնօրեն Անժելիկա Հովհաննիսյան

(ստորագրություն)

02/02/2022թ.

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ **«Տեխնոինժիներինգ» ՍՊԸ**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **«Արարատբանկ» ԲԲԸ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **1510052737280100**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **02290157**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **Երևանի քաղաքապետարան**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02593108**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **Կենտրոնական գանձապետարան**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900015211429**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **134 000 (Մեկ հարյուր երեսունչորս հազար)**

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ (որակավորման ապահովման համար)

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը **ԵՔ-ԲՄԾՁԲ-22/12** ***(պայմանագրի կատարման ապահովում)***

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*